«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

ռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

_____ Ա.Վ.Գրիգորյան

04 հուլիսի 2025թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աննա Վալերիի Դոնչենկոյի «Ռուսաստանի և Հայաստանի արդյունաբերական կոոպերացիայի զարգացման հեռանկարները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.06 – «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Գրիգոր Նազարյանը՝ *տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր,* Արա Մկրտչյանը՝ *տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,* Աննա Փախլյանը՝ *տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,* Վերգինե Կիրակոսյանը՝ *տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,* Թամար Մարգարյանը՝ *տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եվրասիական տնտեսական միությունը, հանդիսանալով տարածաշրջանային ինտեգրացիոն միություն, ենթադրում է անդամ երկրների միջև տնտեսական խորը համագործակցությունը: Տնտեսական համագործակցությունը չի կարող տեղի ունենալ առանց կոոպերացման խորացման, հատկապես արդյունաբերական կոոպերացման՝ նպատակ ունենալով խորացնել անդամ երկրների միջև առկա տնտեսական կապերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՏՄ երկրներից Ռուսաստանն ունի առաջատար դեր՝ կարևորվում է նաև անդամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համագործակցությունը հենց Ռուսաստանի հետ ինչպես տնտեսական համագործակցության շրջանակներում, այնպես էլ հենց արդյունաբերական կոոպերացիայի համատեքստում:

Պայմանավորված վերոնշյալով՝ ներկայացված ատենախոսության թեման բավականին արդիական է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակը Ռուսաստանի և Հայաստանի արդյունաբերական համագործակցության զարգացման միտումների, ուղիների և հեռանկարների բացահայտումն է, ինչպես նաև երկու երկրների փոխշահավետ առևտրատնտեսական գործընկերության ռազմավարության մշակումը՝ հաշվի առնելով ժամանակակից իրողությունները:

Ելնելով սահմանված նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Վերանայել Ռուսաստանի և Հայաստանի միջև արդյունաբերական համագործակցության ընդհանուր սկզբունքների և չափանիշների ձևավորման ներկայիս պայմանները, այդ թվում՝ ԵԱՏՄ տարածքում:
- Գնահատել Ռուսաստանի և Հայաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության ապագա հայեցակարգը կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:
- Առաջարկել եվրասիական օրենսդրության ներդաշնակեցման տարբերակներ, այդ թվում՝ ազգային կարգավորման շրջանակներում առանձին իրավական նորմերի ներդրման առումով, և ցույց տալ դրանց գործնականում ներդրման արդյունքները:

➢ Որոշել Հայաստանում դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հնարավորությունը՝ հաշվի առնելով ռուս-հայկական տնտեսական համագործակցության զարգացումը:

➢ Գնահատել Ռուսաստանի և Հայաստանի միջև արդյունաբերական ինտեգրման դերը և ցույց տալ արտաքին և ներքին առևտրի միտումները՝ ԵԱՏՄ-ին անդամակցության համատեքստում:

➢ Վերլուծել և որոշել Ռուսաստանի և Հայաստանի միջև արտաքին առևտրային ինտեգրման դինամիկան ԵԱՏՄ շրջանակներում:

➢ Տալ Ռուսաստանի և Հայաստանի տնտեսությունում և արդյունաբերությունում տեղի ունեցող գործընթացների հոգեբանական գնահատական:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթները հետևյալն են.

1. Բացահայտվել են Ռուսաստանի և Հայաստանի սոցիալ-տնտեսական և ֆինանսական քաղաքականության ապակայունացման բացասական հետևանքները և սպառնալիքները արդի փուլում՝ արդյունաբերական համագործակցության համաձայնեցվածության բացակայության պայմաններում՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական և արտաքին տնտեսական փոփոխությունները:

2. Մշակվել են արդյունաբերական կոոպերացիայի նոր մոտեցումներ և մեխանիզմներ՝ ուղղված հայեցակարգային և արժեքային մակարդակներում հակասությունների մեղմացմանը և տնտեսական աճի լրացուցիչ հնարավորությունների ստեղծմանը:

3. Արդյունաբերական ճկունության հեքսաֆլեքսի կիրառմամբ մշակվել են ԵԱՏՄ շուկայի հոգեբանական կայունության, ինչպես նաև արդյունաբերության վրա սթրեսի ազդեցության ուսումնասիրության գնահատման մոտեցում: Այն ներառում է երեք մակարդակ՝ Հիմնական մակարդակը՝ ազգային արդյունաբերական քաղաքականության մշակումն է, որը որոշիչ կետ է: Միջին մակարդակը պատասխանատու է դրանց համակարգման համար և հանդիսանում է կառավարման կենտրոն: Վերին մակարդակը՝ ազգային արդյունաբերական քաղաքականությունների ներդաշնակեցումն է, որպես արդյունաբերական հեքսաֆլեքսի «գերարժեք» կամ աջ անկյուն:

4. Մշակվել է երկկողմ և ներեվրասիական նախագծերի արդյունաբերական և ներդրումային բաղադրիչների արդիականացմանն և ուժեղացմանն ուղղված նոր մոտեցման ներդրման մեխանիզմ, որը կապահովի նոր աշխատատեղերի ստեղծումը Ռուսաստանում և Հայաստանում, կբարձրացնի տնտեսական զարգացման մակարդակը և կկանխարգելի ուղեղների արտահոսքը:

5. Իրականացվել է Ռուսաստանի և Հայաստանի կոոպերացիայի և արդյունաբերական փոխգործակցության ներուժի ու մեխանիզմների գնահատում, ինչպես նաև առևտրատնտեսական և արդյունաբերական փոխգործակցության փաստացի մակարդակի վերլուծություն: Իրականացվել է ռուս-հայկական նախագծերի մաթեմատիկական գնահատում՝ ներդրումային ծախսերիմ արտադրության ծավալների, տրանսպորտային ծախսերի և օրենսդրության ներդաշնակեցման մակարդակի օպտիմալացման տեսանկյունից, ինչը թույլ է տվել ձևակերպել արտադրության ծավալների ավելացման, տրանսպորտային ծախսերի կրճատման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման բանաձևը:

6. Մշակվել է ռուսական կոսմիզմի և դրա՝ նորարարական և արդյունաբերական համագործակցային գործընթացների, մատակարարման կայուն շղթաների ապահովման և շուկաների վերահսկման նպատակով բարձր տեխնոլոգիական թվային լանդշաֆտի ստեղծման վրա ազդեցության ըմբռնման նոր մոտեցում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հեղինակի կողմից հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքներն ու նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Ռուսաստանի և Հայաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունների ներկայիս վիճակն ու արդյունաբերական համագործակցության մակարդակը»** գլխում հեղինակն անդրադարձել է Ռուսաստանի և Հայաստանի միջև երկկողմ առևտրի ներկա վիճակին, արդյունաբերական կոոպերացիային, արդյունաբերական արտադրանքի առևտրին, արդյունաբերական կոոպերացիայի վերաբերյալ Ռուսաստանի և Հայաստանի օրենսդրական կարգավորումներին, ինչպես նաև արդյունաբերական կոոպերացիայի միջազգային փորձին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Արդյունաբերական կոոպերացիան ԵԱՏՄ շրջանակներում»** գլխում հեղինակն անդրադարձել է ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների առաջնահերթություններին, ԵԱՏՄ շրջանակներում միասնական ֆինանսական շուկա ձևավորելու խնդիրներին, ինչպես նաև ՀՀ-ում դրամավակային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ռուսաստանի և Հայաստանի արդյունաբերական կոոպերացիա. մասշտաբի էֆեկտի տեսություն»** գլխում հեղինակն անդրադարձել է թվային տնտեսության ոլորտում Ռուսաստանի և Հայաստանի համագործակցության հիմնական ասպեկտներին ու հեռանկարներին, Էներգետիկ ոլորտում Ռուս-հայկական համագործակցությանը, ինչպես նաև թեթև արդյունաբերության ոլորտում Ռուս-հայկական կոոպերացիային:

Ատենախոսության չորրորդ՝ **«Ռուս-հայկական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները ԵԱՏՄ շրջանակներում արդյունաբերական համագործակցության համատեքստում»** գլխում հեղինակն անդրադարձել է համակարգային բնույթ ունեցող վերազգային ինտեգրացիոն նախագծերին, ԵԱՏՄ շուկայի հոգեբանական կայունությանը, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների մրցունակության մակարդակի բարձրացմանը՝ դիտարկելով ԵԱՏՄ-ն հետագայում որպես աշխարհի կարևորագույն կենտրոններից մեկը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ ու առաջարկություններ, որոնք ամփոփված են ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսության մեջ նշված է, որ ստացված արյունքները հրապարակվել են 7 հոդվածի տեսքով, սակայն սեղմագրում ներառված է 8 հոդված:

2. Հետազոտական թեմայի հիմնավորման մեջ հեղինակը շեշտադրում է, որ «Հայաստանի տնտեսությունն առանձնանում է արտադրության դիվերսիֆիկացման բարձր աստիճանով» (էջ 4), թեև ատենախոսության 29-30-րդ էջերում ներկայացված ՀՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքից պարզ է դառնում, որ հիմնական 5 ճյուղերին բաժին է ընկնում երկրի ողջ արդունաբերության 82.5%-ը, ինչն ավելի շատ վկայում է արդյունաբերության գերկենտրոնացվածության մասին:

3. Գծապատկերներ 1.3-ից 1.6-ում հեղինակը ներկայացրել է ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ արտահանման և ներմուծման դինամիկան ինչպես բացարձակ թվերով, այնպես էլ աճի տեմպերով: Այսինքն՝ ըստ էության, գծապատկերներ 1.4-ը և 1.6-ը պետք է

արտացոլեն համապատասխանաբար գծապատկերներ 1.3-ի և 1.5-ի տվյալները՝ աճի տեմպերի տեսանկյունից: Սակայն աճի տեմպերն արտացոլող գծապատկերներում առկա են հետևյալ խնդիրները.

- Ներկայացված տվյալների՝ միմյանց հակասելու փաստ, մասնավորապես՝ գծապատկեր 1.3-ի համաձայն՝ 2024 թվականին 2023 թվականի համեմատ ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ արտահանման ծավալները նվազել են՝ 5.6 մլրդ. ԱՄՆ դոլարից դառնալով 1.5 մլրդ. ԱՄՆ դոլար, մինչդեռ գծապատկեր 1.4-ում տեսնում ենք 20.3% աճ:
- Ներկայացված տվյալների հիման վրա սխալ հաշվարկների առկայության փաստեր, մասնավորապես՝ գծապատկեր 1.3-ի համաձայն՝ 2022 թվականին 2021 թվականի համեմատ ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ արտահանման ծավալները աճել են մոտ 2 անգամ, մինչդեռ գծապատկեր 1.4-ում տեսնում ենք 50% աճ: Նման խնդիր կա նաև գծապատկեր 1.6-ում, մասնավորապես՝ գծապատկեր 1.5-ի համաձայն՝ 2023 թվականին 2022 թվականի համեմատ ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ ներմուծման ծավալները աճել են մոտ 1.7 (7.8 մլրդ. ԱՄՆ դոլար հարաբերած 4.6 մլրդ. ԱՄՆ դոլար) անգամ, իսկ 2024 թվականին 2023 թվականի համեմատ՝ մոտ 1.35 անգամ (10.48 մլրդ. ԱՄՆ դոլար հարաբերած 7.8 մլրդ. ԱՄՆ դոլար), այսինքն՝ ավելի քիչ, քան նախորդ տարի, սակայն գծապատկեր 1.6-ում 2023 թվականի աճի տեմպն 39% է, իսկ 2024 թվականի աճի տեպը՝ 86.5%, այսինքն՝ ավելի շատ, քան նախորդ տարի:

4. Հայաստան-Ռուսաստան արտաքին առևտրային հոսքերի վերլուծության հիման վրա հեղինակը մատնացույց է անում հատկապես 2022 թվականից Հայաստանից արտահանման աճի ցնցող միտումները՝ առանց խորամուխ լինելու դրանց պատճառահետանքնային հիմնավորումների մեջ: Արդյունքում, սին տպավորություն է ստեղծվում, թե ՀՀ արտահանման ծավալների աճն ապահովվել է արդյունաբերական արտադրության աճի և Ռուսաստանում հայկական արտադրանքի նկատմամբ պահանջարկի կտրուկ ավելացման հաշվին (էջ 34):

5. Ակնհայտ է, որ դեպի Ռուսաստան ՀՀ արտահանման նմանօրինակ աննախադեպ աճի հիմքում մեծ է վերաարտահանման ունեցած դերակատարումը, որն, ըստ էության, որոշակիորեն անտեսվել է հեղինակի կողմից: Թեև աշխատանքում անդրադարձ է արվել Հայաստանից բարձր տեխնոլոգիական ապրանքների վերաարտահանման ցուցանիշներին, մնացած ճյուղերի (հատկապես՝ ոսկու) վերաարտահանման ցուցանիշները դուրս են մնացել ատենախոսի ուշադրությունից և չեն դիտարկվել որպես ՀՀ-ից արտահանման աճի կարևոր պատճառ:

6. Աշխատանքում ներկայացված որոշ գծապատկերների դեպքում հեղինակը նշում է, որ որպես աղբյուր են ծառայել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կամ Եվրասիական տնտեսական կոմիտեի վիճակագրական տվյալները, սակայն չի հստակեցնում կոնկրետ հրապարակումները կամ բազաները, մինչդեռ նույնիսկ միևնույն վիճակագրական մարմնի տարբեր հրապարակումների միջև կարող են լինել ցուցանիշների էական անհամամասնություններ: Ավելին, կիրառված վիճակագրական աղբյուրները չեն հիշատակվում նաև գրականություն ցանկում:

7. Հետազոտության շրջանակներում ատենախոսն օգտագործել է «արդյունաբերական ճկունության հեքսաֆլեքս» մեթոդը, որի կիրառման նպատակահարմարությունը ատենախոսի կողմից լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Թեև հեքսաֆլեքսը ծագում է կոգնիտիվ-վարքաբանական թերապիայի ոլորտից, այն կարելի է կիրառել տնտեսագիտության որոշ ենթաոլորտներում, հատկապես երբ խոսքը վերաբերում է միկրոմակարդակի որոշումների, վարքագծի տնտեսագիտության (behavioral economics) և ձեռնարկատիրական որոշումների ուսումնասիրությանը: Այս առումով, մեթոդի կիրառումը «Ը.00.06 – Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտական դասիչով ատենախոսության շրջանակներում առնվազն խորթ է, ինչը, որպես նորարարական մոտեցում, լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի: **Այս դիտարկման համատեքստում առաջարկում ենք նորույթներից հանել թվով 3-րդ նորույթը:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աննա Վալերիի Դոնչենկոյի «Ռուսաստանի և Հայաստանի արդյունաբերական կոոպերացիայի զարգացման հեռանկարները» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է Ռուսաստանի և Հայաստանի միջև արդյունաբերական կոոպերացիայի զարգացման հեռանկարների բացահայտմանը:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքներն ու գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Աննա Վալերիի Դոնչենկոյի «Ռուսաստանի և Հայաստանի արդյունաբերական կոոպերացիայի զարգացման հեռանկարները» թեմայով ատենախոսությունը ու դրան համատեղ կազմված սեղմագիրն ու հոդվածների հրապարակումները համապատասխանում են «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման» կարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.06 – «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի՝ որպես առաջատար կազմակերպություն, Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (04.07.2025թ., արձանագրություն թիվ 1):

ՀՊՏՀ Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ **Ա.Ա.Մկրտչյան**

ՀՊՏՀ Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու՝ Ա.Ա.Փախլյան

ՀՊՏՀ Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Մկրտչյանի և նույն ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Ա.Փախլյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ Ն.Հ.Դարբինյան

«04» հուլիսի 2025թ.

Կ.Տ.